ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտ 2023 թվականի թիվ 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16–Ի N 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2023 թվականի մարտի 16-ի N 3 հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Բենիկ Արտաշի Խաչատրյանին օտարելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Արտուրիկ Ռուբիկի Մարգարյանին օտարելու մասին

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N145-Ա և 2023 թվականի փետրվարի 15-ի N2-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N134-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին

7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023 թվականի ՄԱՐՏԻ 16
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտ 2023 թվականի թիվ 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԲԵՆԻԿ ԱՐՏԱՇԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Բենիկ Արտաշի Խաչատրյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաքի Ե. Չարենցի փողոց 27/104 հասցեում գտնվող 38,6 քմ արտաքին մակերեսով երկհարկանի շինությունը /ավտոտնակը և ծածկը/ և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00193 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0046-0054, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07032023-09-0009 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Բենիկ Արտաշի Խաչատրյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ Բենիկ Արտաշի Խաչատրյանին օտարելու մասին» Մեղրի համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Մեղրիի համայնքապետարանի բյուջեի եկամուտներում կլինի ավելացում 70234 ՀՀ դրամի չափով, իսկ ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտ 2023 թվականի թիվ 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՐՏՈՒՐԻԿ ՌՈՒԲԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Արտուրիկ Ռուբիկի Մարգարյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաքի Ե. Չարենցի փողոց 24/65 հասցեում գտնվող 21,5 քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակը / և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00215 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0046-0053, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24022023-09-0045 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Արտուրիկ Ռուբիկի Մարգարյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Երկհարկանի շինության համար՝ 10 000 դրամ x 0,1209 x 38,6 քմ = 46668 /քառասունվեց հազար վեց հարյուր վաթսունութ / ՀՀ դրամ,
2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի 1221 դրամ x 19,3 քմ =23566 / քսաներեք հազար հինգ հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ:
3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա): 2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023 թվականի ՄԱՐՏԻ 16
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտ 2023 թվականի թիվ 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15 -ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2023 թվականին օտարման կամ օգտագործման տրամադրման ենթակա հողամասերի ցանկը հաստատելու մասին» N3-Ա որոշման հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԵՎՄԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Խ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023 թվականի ՄԱՐՏԻ 16
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտ 2023 թվականի թիվ 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N145-Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N2-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողերից սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտի իրավունքով) հողամասերի տրամադրմանը համաձայնություն տալու և Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի N 112-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N145-Ա և 2023 թվականի փետրվարի 15-ի «Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2023 թվականին օգտագործման, կառուցապատման իրավունքով տրամադրելու և օտարելու, հրապարակային սակարկությունների վարձավճարների և օտարման մեկնարկային գները հաստատելու մասին» N2-Ն որոշումները:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Խ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023 թվականի ՄԱՐՏԻ 16
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտ 2023 թվականի թիվ 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 4-Ի ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՀԱՏՎԱԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի թիվ 851-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1274- Ն որոշումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահ ճանաչված հողամասերը առաջարկված փոխհատուցման գումարներով օտարելու Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Խ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023 թվականի ՄԱՐՏԻ 16
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտ 2023 թվականի թիվ 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի ապրիլի 4-ը՝ ժամը 15:00-ն:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023 թվականի ՄԱՐՏԻ 16
ք.Մեղրի